Հաստատում եմ՝
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի ԺՊ-ի ՊԿ
«14» Հոկտեմբեր 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մարտիրոսյան Էրիկ Զավենի

ԺԳ.00.02. «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված՝

«Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացումն աթլետիկական վարժությունների կիրառմամբ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Առողջ սերունդ դաստիարակելն այսօր ունի խիստ կարևոր նշանակություն՝ պայմանավորված դպրոցականների առողջական և ֆիզիկական ակտիվության ցուցանիշների վատթարացմամբ: Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության, առողջության ամրապնդման, համակողմանի և ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտություն է առաջանում բարելավել ֆիզիկական դաստիարակության գործընթացը՝ առաջարկելով արդիական, ժամանակի պահանջների համահունչ մոտեցումներ և ծրագրեր: Այդ իրավիճակից դուրս գալու ուղիներից է ֆիզիկական դաստիարակության դասավանդման գործընթացում նոր մոտեցումների մշակումը և մարզաառողջարարական համալիր միջոցների կիրառումը:

Հայտնի է, որ հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրում, որպես պարտադիր բաղադրիչ, ներառված են աթլետիկական վարժությունները, որոնք համարվում են լավագույն միջոց ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարելավման համար:

Այս համատեքստին է վերաբերում ատենախոսական աշխատանքի ամբողջ էությունը և գործընթացի տրամաբանությունը:

Ատենախոսական աշխատանքում հայցորդը նպատակ է ունեցել մշակել և գիտափորձով հիմնավորել աթլետիկական արտադասարանական պարապմունքների ծրագիր՝ ուղղված դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 146 էջի սահմաններում, այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածության բաժնում հստակորեն ձևակերպված են աշխատանքի արդիականությունը, նպատակը, վարկածը, օբյեկտը, առարկան, խնդիրները, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության կազմակերպումը քանակակազմը և փուլերը:

Աշխատանքն իրականացնելիս հեղինակն ուսումնասիրել է բավականաչափ մասնագիտական գրականություն, կատարել բազմաբովանդակ վերլուծություն: Կատարած վերլուծությունները ի մի են բերվել «Ուսումնասիրվող հիմահարցի տեսական վերլուծությունը» ատենախոսական աշխատանքի առաջին գլխում: Ուսումնասիրված գրականության ցանկում տեղ են գտել նաև վերջին տարիների հրատարակած բավականաչափ քանակով աշխատություններ: Գրական աղբյուրների վերլուծությունից և դպրոցում մանկավարժական աշխատանքի փորձի ուսումնասիրությունից հեղինակը հանգել է այն եզրակացության, որ դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության մակարդակի բարելավման անհրաժեշտություն կա: Նշվածի համար առաջարկվում է կիրառել արտադասարանական լրացուցիչ պարապմունքները՝ աթլետիկական վարժությունների միջոցով:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը մշտադիտարկման արդյունքում գնահատել է 10-13 տարեկան 560 երկսեռ դեռահաս դպրոցականների ֆիզիկական զարգացման (մարմնի քաշ, հասակ, կրծքավանդակի շրջագիծ, թոքերի կենսական տարողություն) և շարժողական ընդունակությունների (արագաշարժություն, դիմացկունություն, արագաուժային ընդունակություններ, ցատկունակություն, ճարպկություն, շարժումների ճշգրտություն) մակարդակը: Ստացված արդյունքների վերլուծությունը հիմք է հանդիսացել փորձարարական ծրագրի ստեղծման համար: Մշակվել են նաև մոդելային սանդղակներ դեռահաս դպրոցականների ֆիզիկական զարգացման և

շարժողական ընդունակությունների գնահատման համար:

Աշխատանքի երրորդ գլխում ներկայացված են գիտափորձի արդյունքները, որտեղ հեղինակը սոցիոլոգիական հարցման, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի վերլուծության, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքների ամփոփման հիման վրա, որպես առաջադրված գիտական վարկածի հիմնավորում, վեր է հանում առկա բացթողումները դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության գործընթացում: Հաշվի առնելով այս հանգամանքը հեղինակը մշակել է 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների աշակերտների համար արտադասարանական պարապմունքների ծրագիր՝ աթլետիկական վարժությունների կիրառմամբ, որը ներդրվել է մանկավարժական գիտափորձի ընթացքում:

Ստացված ցուցանիշների բազմակողմանի մաթեմատիկական վերլուծության արդյունքները վկայում են աշխատանքի գիտական բավարար հիմնավորման մասին: Մանկավարժական գործընթացում դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացման նպատակով ներդրված մեթոդիկայի արդյունավետության մասին է խոսում նաև գիտափորձի թեստավորման արդյունքները:

Ատենախոսական աշխատանքի վերլուծությունից առանձնակի հարկ ենք համարում շեշտադրել հետազոտության արժեքավոր կողմերը.

✓ հեղինակի կողմից կատարվել է ուսումնասիրվող հիմնահարցի շուրջ մասնագիտական գրական աղբյուրների վերլուծություն, թվով 194 գրականություն, ինչը հնարավորություն է ընձեռնում բացահայտել ուսումնասիրվող հիմնահարցի խնդիրները և առաջադրել դրանց լուծման ուղիները՝ կիրառելով գիտական հետազոտության արդի մեթոդների լայն շրջանակ:

✓ Մշակվել են դեռահաս դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների գնահատման մոդելային սանդղակներ, որոնք մեթոդական մեծ օգնություն են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցիչների համար:

✓ Ֆիզիկական դաստիարակության գործընթացում առաջին անգամ մշակվել է արտադասարանական պարապմունքների ծրագիր՝ աթլետիկական վարժությունների կիրառմամբ և գիտափորձով ապացուցվել է դրա արդյունավետությունը:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, հարկ ենք համարում նշել որոշ

բացթողումների և վրիպումների մասին.

1. Մշտադիտարկման և գիտափորձի ժամանակ դիմացկունության մրցաձևերի արդյունքները աղյուսակներում ներկայացված են վայրկյաններով, ինչը մեր կարծիքով ավելի տեղին կլիներ ներկայացնել րոպեով և վայրկյաններով:
2. Աշխատանքի երրորդ գլխում տեղ են գտել նաև «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցիչների սոցիոլոգիական հարցման արդյունքները (աղ. 12), որը կարելի էր տեղափոխել հավելվածների բաժին, քանի որ այն գծապատկերի տեսքով և ավելի մատչելի կերպով ներկայացված է նույն բաժնում:
3. Գիտափորձի ընթացքում յուրաքանչյուր շարժողական ընդունակության գնահատման համար ընտրվել է մեկ ստուգողական թեստ ցանկալի կլիներ այդ վարժությունները լինեին մեկից ավելի, ինչը ավելի ցայտուն ցույց կտար տվյալ շարժողական ընդունակության մակարդակը:
4. Մանկավարժական գիտափորձի մասնակիցների աշխատունակության ցուցանիշների տեղաշարժերի փոփոխությունը ներկայացված է 5-8-րդ գծապատկերում (էջ 100, 101, 103, 104): Մեր կարծիքով, ավելի պարզ դարձնելու համար անհրաժեշտ էր ցույց տալ աշխատունակության ցուցանիշների տարբերության տոկոսային հարաբերությունը:
5. Փորձարարական և ստուգողական խմբերի վերջնական արդյունքները պետք է տրվեր մեկ միասնական աղյուսակով, որտեղ ավելի ակնհայտ կերևար արդյունքների տարբերությունը:
6. Աշխատանքում առկա է նաև տեխնիկական վրիպակներ (էջ 31, տող 8) և տերմինաբանական ոչ հստակ ձևակերպումներ (էջ 14, 47, 48, 73):

Նշված բացթողումները էականորեն չեն ազդում կատարված գիտական հետազոտության որակի վրա, չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը: Ուստի ամփոփելով կատարված աշխատանքը և դրանից բխող արդյունքները, գտնում ենք, որ այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով և համապատասխանում է ատենախոսական աշխատանքի կատարմանը ներկայացվող պահանջներին: Սեղմագիրը, հրատարակված գիտական հոդվածները համապատասխանում են ատենախոսությանը և լիովին արտացոլում են հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսական աշխատանքի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքներն ու եզրակացությունները փաստում են, որ Էրիկ Զավենի Մարտիրոսյանի «Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացումն աթլետիկական վարժությունների կիրառմամբ» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է ՇՊՀ-ի Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի և մանկավարժության ամբիոնների համատեղ նիստում (արձանագրություն թիվ 2):

Նիստին մասնակցել են՝ մ.գ.դ պրոֆեսոր Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մ.գ.թ պրոֆեսոր Բ. Սերոբյանը, պրոֆեսոր Ա. Մաթևոսյանը, մ.գ.թ դոցենտ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, մ.գ.թ դոցենտ Գ. Աղանյանը, Լ. Միքայելյանը, Ա. Յայլոյանը, դոցենտ Արտուշ Խաչատրյանը, բ.գ.թ դոցենտ Լ. Գևորգյանը:

Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ
ԺՊ մ.գ.թ, դոցենտ՝ Գ. Աղանյանը

Մանկավարժության ամբիոնի վարիչ ԺՊ՝ մանկ. գիտ. թեկնածու,
դոցենտ՝ Լ. Ղուկասյան

Հաստատում եմ ստորագրությունները:

ՇՊՀ Հիմնադրամի գիտական քարտուղար՝ Կ. Պետրոսյան